

Լսում ենք որ Ռիֆլիսի հայոց եկեղեցիներում ընտրված 60 պատգամաւորները, որոնք պէտքը ընտրեն Ներսիսեան դպրոցի հոգաբարձունքին վճել են դիմել Վհաբաւ Կաթողիկոսին, խնդրելով նրան, որ վերջապէս նշանակի մի թեմական առաջնորդ Վրաստանի եւ Խմէլքի հայոց թեմի համար, որ Այվաղովսիէ արքեպիսկոպոս մահից յետոյ մնում է միջնէ այժմ առանց առաջնորդի:

Ղազարի մասին խոսելիս կրակ տալը չարեանակ-
վում է, մանաւանդ կօթի գիւղում։ Բացի այդ
թշնամարտի միջանկյանց գոմէշներ են սպանու-
մ։

Կօթի գիւղում, ինչպէս մեզ հաղորդում են,
մի շատ վատ սովորութիւն կայ, որ մինչև այժմ
չէ վերանում, այն է որ 10 տարեկան աղջիկնե-
րին պատկուհի են 15—16 տարեկան պատանի-
նի հետ։ Այդ տեսակ ամուսնութիւններից ա-
ռաջացած փեսաները ինքն ըստ ինքեան հասկա-
նալի են։

ՄԱՐԿԱՆ ՏԵՍՏԻԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՍԱՆ ԱՊՍՏՈՒՄՈՒԹԻՒՆ

Վանայ նահանգին կողմէն, Թուրքո-Պար-
սկական սահմանագլխին վրայ, քրդական
նոր ապստամբութիւն մը ծագելուն լուրը
պաշտօնագրէն կը ստուգուի։

Վազըրը լրագիրն հետեւեալ կը հրատա-
րակէ իւր երէկուան թուով։

«Պարսից շահը Վեհ, Սուլթանին հե-
ռազիր մը քաշելով, Պարսկաստանի և Սա-
մանեան տէրութեան միջև կեցած բարե-
կամական յարաբերութիւնները կը խլէ, և
Վեհ, Սուլթանին հետ դաշնակցութիւն մը
կնքելու փափաք կը յայտնէ։ Եւ այդ կը
ծանուցանէ թէ 2,000-ի չափ քուրդք Պարս-
կական սահմանագլխին անցնելով, Պարսիկ
կառավարութեան դէմ ապստամբութիւն
հրատարակած են։ Հետեւեալ, Շահին կա-
ռավարութիւնը զանոնք նուաճելու համար
զօրք զրկած է անոնց վրա, զէպի սահմա-
նագլխին։ Պարսկաստանի Վեհագլխան ի
վերջոյ կը խնդրէ Վեհ, Սուլթանէն, որ
Սամանեան սահմանագլխին կողմէ ալ պէտք
եղած զգուշական միջոցները ձեռք առնուին
անմիջապէս։»

Արդ կը խլուի թէ Շէյխ-Ապէյտուլլահ
ալ առ Բ. Գուռն հեռագիր մը քաշելով,
ծանուցած էր թէ «Պարսիկ հպատակ
Քուրդեր՝ Պարսկաստանէն օսմանեան հողն
արշաւած, և ի մէջ այլոց, իւր (Շէյխ Ա-
պէյտուլլահ) կալուածներուն վրա առած
են։ Իսկ Վեհ, Շահը կըսէ թէ Վանայ վի-
լայէթէն Քուրդք ապստամբք Պարսկաստան
արշաւած են։ Թէհրանէն Անգլիական լրա-
գրաց քաշուած Ուիլիսէի հեռագիրն ալ
նոյնը կը ծանուցանէր։ Եւ ինքեան իւր
կողմ լինելուն վրայ վարանուին անկարե-
ւի է։

Կը հետեւեալն ուրեմն թէ այս գործին
մէջ ալ Շէյխ Ապէյտուլլահ կարեւոր դեր
մը կը խաղայ՝ ամենայն կերպիւ յար և նը-
ման անցեալ տարուանին, և թէ այժմ ալ
իւր շարժումներն սքողելու ջանքեր կընէ։

Սթանպուլ լրագիրը Շէյխ-Ապէյտուլ-
լահի շարժման վրայ Թէրեզմանը շագիդա-
թի հրատարակած տեղեկութեանց առթիւ
սա զիտողութիւնները կընէ իւր շարժ
աւուր թուով։

«Շագիդաթի այս տեղեկութիւնները զար-
մանք կազմեն մեզ։ Շէյխ-Ապէյտուլլահ,
որ հանրաժանօթ է, և զոր մանաւանդ
հայը և Վանայ նահանգին ուրիշ քրիստո-
նայք յոյժ լաւ կը ծանչեն, Շէյխ-Ապէյ-
տուլլահ, կըսեմք, միշտ բարեկամ էր սահ-
մանագլխին վրայ բնակող Պարսիկ քրդաց հե-
ռազիր։ Այդ կողմերն ամեն մարդ գիտէ որ Շէյխ-
Ապէյտուլլահին և Պարսիկ քրդաց զինուոր
Պէյլին Մէհմէտ Ալին միջև միշտ ամենա-
սերտ յարաբերութիւնը կեցած են։

«Ուստի, կը կարծեմք թէ Շէյխ-
Ապէյտուլլահի կողմանէ կայսերական կա-
ռավարութեան տրուած տեղեկութիւննե-
րէն կասկածելու է քիչ մը։ Այս Շէյխն,
որ պտուտած դաւաճաններն պատուհանն է,

վերջին պատերազմէն յետոյ, յորում իւր-
յայտնի թշնամիներէն աւելի վնասներ հա-
տուց Թուրքիոյ, կը յուսար թէ իշխան կը
հրատարակուի այն տեղերուն, զորս արդէն
կը քանդէր ու կը կործանէր։ Բարեբաղդա-
բար, իւր այս գաղափարը չը յաջողեցաւ։
Արդեօք Պարսիկ քրդաց հեռա իւր ունեցած
կարծեցեալ վէճերը պատրուակ մը չէ՞ն
ճշմարիտ բանակ մը հանելու, որպէս զի
Բ. Գրան մինչև ցարդ տալ չուզածն ինքն
զինուոր գործութեամբ գրաւէ։

«Յը գիտեմք թէ այս գաղափարը կը
համաձայնի՞ր քրդական Միութեան գաղա-
փարին հետ, զոր շագիդաթ յոյժ օգտակար
կը գտնէր։ Սակայն գիտեմք որ Ապէյտուլ-
լահին ծանուցած շարժումը՝ Վանայ և
Կարնոյ նահանգաց թշուառ ժողովրդեան
համար նորանոր աղետից նշան մը պիտի
լինի։»

(Մասիս)

ԹԻԻՐԵԿԱ

Վազըրի ուղղեալ թղթակցութեան հե-
տեւալ հատուածն հետաքրքրական է։

«Վանայ Ուստական հիւպատոս Աամ-
սարական անցեալները Տիարպէքիւր Եկաւ,
ի տեղւոյս հիւպատոսարանին մէջ քանի
մ'օր հիւր մնալէ յետոյ, Քարբէրի և
Տէրափի ծանրօր Երգիկա գնաց։ Նորա
շարժման և գործոց նայելով, անպատճառ
զաղտնի նպատակ մունի իւր այս ուղե-
ութեան մէջ...»

Երէկուան Սթանպուլի մէջ հետեւեալ
կը կարդամք։

«Ըստ նոր ազգահամարի մը, միայն
Մշտ գաւառին մէջ 100,000 շաք կան,
մինչդեռ նախորդ ազգահամարի մը մէջ 36
հազար միայն արձանագրուած էր։ Այդ
տեղերը բնակող շաք անհուն մեծամաս-
նութիւնն անգամ մ'եւս հաստատուած է
այս նոր ազգահամարով։»

Սուլթան շաքաւոր Պաղէ
Գափուրի մեծ պողոտային վրայ կառու-
ցեալ դամբարանն առջի օր ցորեկ շտեն
ամբողջապէս կողոպտեցաւ։ Աւիանակալ
Սուլթանին ընտանեաց Խօթն գերեզման-
ներուն վրայ գտնուող բոլոր թանկագին
նիւթերը վերցուցանւոյն այս նիւթերուն կար-
գէն էին 20-ի չափ Քաշմիր, որք Սուլ-
թան շաքաւոր Եւաջոյն ժամանակէն մը-
նացած էին և քանի մը հազար ոսկոյ ար-
ժէք ունէին։ Սուլթանին և արքայազանց
փաթեթոցներուն վրա դրուած գոհարեղէնք
ալ որք նոյնպէս մեծագին էին, վերցուցանւոյն
Արտուի թէ գողերը Սուլթանին եւս
Ոստիկանութիւնը կը փնտռէ զանոնք։

(Մասիս)

ԳԵՐՄԱՆԻԱ

Իշխան Բիսմարկի հրաժարականի առի-
թով տարածված լուրերի մասին «Polit.
Corresp» լրագիրը ստացաւ հետեւեալ
նամակը, նոյեմբերի 7-ից, արժանահաւատ
աղբիւրից։ Եթէ հաստատնք այն լու-
րերին, որ Եւրօպական մամուլը երկու շա-
բաթ շարունակ յամառութեամբ տարա-
ծում է, ուրեմն գերմանական պետական
կանցլերը գործերից հեռացած պէտք է
լինի։ Այդ լուրերը իսկապէս սխալ են և
հիմնված են հետեւեալ իրողութեան վրա։
Գետական կանցլերի գործունէութիւնը մի
այնպիսի արեւելի հանդիպեց, որ ոչնչաց-
րեց պատրաստված մի գործի աջողութիւնը
և իթէ այդ արեւելքը չը յաղթէր, կարող
էր մեծ վնասներ տալ Գերմանիայի քաղա-

քական զրուծեանը։ Այդ արեւելքը այն-
պիսի տպաւորութիւն գործեց իշխան Բի-
մարկի վրա, որ նա տկարացաւ և ստիպ-
վեցաւ մօտաւորապէս հոկտեմբերի 27-ին
զազարեցնել թէ արտաքին գործերի և
թէ առեւտրական միջնորդութեան կառա-
վարելու։ Գերմանական օրէնքների համե-
մաւ, իբր պետական կանցլերը արտաքին
գործերի կառավարութեան ժամանակ ար-
գելքների է հանդիպում։ Նրան փոխարի-
նում է կամ միջնորդ օգնականը, կամ ար-
տաքին գործերի միջնորդութեան զինուոր
քարտուղարը։ Իշխան Բիսմարկ, իբրեւ պրու-
սական առեւտրական միջնորդ, ինչպէս իր
ընկեր Բեօտարիւրից փոխարինել իրան
կարճ ժամանակով։ Այսօր իշխան Բիսմարկ
նորից սկսեց արտաքին գործերի միջնորդի
պաշտօնը վարել և այս շաբաթ կը սկսի
առեւտրական միջնորդութիւնն էլ կառա-
վարել։ Սրանից կարելի է եզրակացնել, որ
իշխանը առողջացել է և նրա հիւանդու-
թեան պատճառներն էլ ոչնչացած են։
Այն լուրը, իբր թէ իշխանը վերջնականա-
պէս հրաժարական է տուել, բոլորովին
անհիմն է և նրա թշնամիների հնարած։
Իրողութիւնը այս է։ Բացի իշխանի հրա-
ժարական տալու սխալ լուրից, մի քանի ան-
հիմն հաղորդութիւններ էլ տարածվեցան,
որոնք պաշտօնական աղբիւրներից էին
ստացվում։ Սրա պատճառն այն է, որ նոյն
իսկ կառավարչական շրջանները սխալ են-
թաղութիւններ էին անում իշխանի դի-
տաւորութիւնների մասին։ Իշխանը երբեք
չէ խնդրել պրուսական միջնորդ Բեօտարի-
ւրի փոխարինել իրան և վերջնականա-
պէս վարել պրուսական առեւտրական մի-
ջնորդի պաշտօնը։ Եթէ այդ առիթով պաշ-
տօնական լրագիրները սխալ լուրեր տարա-
ծեցին, զրա պատճառն այն էր, որ տպա-
րական վարչութիւնը մոլորեցրած էր պաշ-
տօնական շրջանների սխալ հաղորդութիւն-
ներից։ Այստեղ գիտաւորութիւն կայ ներ-
քին գործերի միջնորդութեան մէջ մի ա-
ռանձին բաժին նշանակել սօցեալ-քաղա-
քական օրինադրիւնը պատրաստելու հա-
մար, որպէս զի այդ միջնորդութիւնը աշ-
խատող ոյժեր ունենայ և ստիպված չը լի-
նի դիմել պրուսական առեւտրական մի-
ջնորդութեան օգնութեանը։ Այդ բաժնի
զինուոր կը նշանակվի Բեօտարիւրի։ Այդ
բաժնիւր անհրաժեշտ կը լինի իշխան Բի-
մարկի համար միայն այն զէպքում, եթէ
ինքը կը թողնի պրուսական առեւտրական
միջնորդութեան կառավարութիւնը։ Իսկա-
պէս այդ առանձին բաժնիւր հազիւ թէ
կազմվի այժմ, քանի որ Բիսմարկ վարում
է պրուսական առեւտրական միջնորդի պաշ-
տօնը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

«Եթեմերի» ընկերութեանը Թէհրանից
հեռագրում են նոյեմբերի 3-ից։ Բիւնաբից
ստացված տեղեկութիւնների համեմատ նո-
յեմբերի 1-ից քիւրդ գործերի տառջնորդ
Աբդուլ-Կադիր 3000 հեծեալ և 2000 հետե-
ւակ գործերով յետ քաշվեցաւ Տիւրատա գե-
տի միւս կողմը։ Քիւրդերի յարձակմանը են-
թարկված նահանգները այստեղից ուղեոր-
վեցան Խօթը բառալիւն հետեւակ և մի
հազար հեծեալ պարսկական զօրքեր։ Շէյխ
Իբադուլլահ Նախրիմանի բանակից շա-
րունակ ուղարկում է զէնքեր և պատե-
րազմական պաշարներ։ Քիւրդ առաջնորդ-
ների մէջ անբաւականութիւններ են տի-
րում և շամալաղա հրաժարվեցաւ արշա-
ւել Թաւրիզի վրա։
Վարնայից «Daily News» լրագիրն հե-

ռագրում են նոյեմբերի 10-ից։ Շէյխ-Իբա-
դուլլահ երկու քիւրդ պատգամաւորների
հետ մի նամակ ուղարկեց Թէհրանի մէջ
ապրող պարսից շահի եղբորը, որով շէյխը
առաջարկում էր իշխանին քիւրդական ապս-
տամբութեան դուռն անցնել և մի անկախ
պետութիւն կազմել։ Շահի եղբայրը, թէ-
պէս մի քանի տարի առաջ ներված էր,
բայց, ինչպէս կարծում էին, թշնամարտ
էր նայում եղբոր վրա։ Նա անյապաղ ներ-
կայացրեց շահին թէ Իբադուլլահի նամակը
և թէ նրա ուղարկած երկու պատգամա-
ւորներին։ Թիւրքիայի մէջ կասկածում են,
որ Պարսկաստանից արտաքսված քիւրդերը
կաւերն շայատաւը։ Պարսկական դես-
պանը և, Պոսի մէջ դեռ առաջ Բ. Գրան
ուշագրութիւնը դարձնում էր այն հանգա-
մանքի վրա, որ Իբադուլլահը պատրօնների
երկու գործարաններ ունի և որ քիւրդերի
շարժում է նշմարվում, իսկ Բ. Գուռը ո-
չինչ միջոցներ չը գործադրեց ապստամբու-
թեան առաջն առնելու համար։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Գալթէժ, 28 հոկտեմբերի

Քիւրդերի երազական միութեան գործը՝ կար-
ծես թէ էլ առաջ չէ դնում։ Շէյխ-Իբադուլլահը,
որ անձամբ Ուլաի գաւառ, նոյն քաղաքը 20 օր
պաշարեց բազմաթիւ քիւրդերով, չը կարողացաւ
առնել Քաղաքից արձակված թուրքները
նրա մարդկանց բաւականին ջարդ տուին, մին-
չև որ Թէյմուր-աղա զօրապետը Մակուից վրա
հասաւ պարսկական զօրքերով և քիւրդերին կո-
տորելով ետ մղեց անձատուր չեզոք Աւաի քա-
ղաքից։ Քիւրդերից շատ գերիներ են ընկած
պարսից ձեռքը, որոնք այս օրերս տպավորւում են
Գալթէժ։ Բայց և անպէս, ասում են թէ Շէյխի
մարդիկը Աւաի գաւառում հարկւարտը գիւղեր
ոտնակոխ անելով, ամայի են դարձրած, և նրանց
բոլոր նիւթերը յափշտակած։

Շէյխ Գալթէժ թէն Սովուք-Բուլաղում նը-
ստած է, բայց ինչպէս երևում է, նա չուտով կը
փախչի, որովհետեւ նրա հետ միացող պարսից
քիւրդերի մեծագին մասը իրանց թէգերով թալ-
տուին նորան և եկան պարսից բանակի հետ միա-
ցան։ Սրանք Շէյխի գործութիւնից սարսափելով
և այն կողմերը պարսից զօրք չը լինելով՝ առ-
երես միացած են եղել Շէյխի հետ, իսկ այժմ
կը պարսից բանակը բաւականին ստուարնալով
Ձղաթի և Թաթաւի գետերն անցաւ և մօտե-
նում է Սովուք-Բուլաղին, նրանք այս հան-
գամանքից օգուտ քաղելով, անցան պարսից
կողմը։ Պարսից Մամուշ ասված քաջամարտիկ
ցեղը պատրաստվում է կատաղի պատերազմ
անելու Շէյխի բանակի հետ և հաւանական է
Շէյխ-Գալթէժը բռնվի։ Մի խօսքով պարսից
քիւրդերի պարսից հետ միանալով մի գորաւոր
փաստ է հաւատարմութեամբ, որ Շէյխ-Իբադուլլահի գո-
րծութիւնը երկուքի բաժանվեցաւ, նրա մի թիւը
կոտորվեցաւ։ Թէհրանից գնացող բանակը հասած
է Սովուք-Բուլաղի սահմանը, Ուլաի էլ հետզհե-
տէ գործերը շատանում են, որով պարսիկները
Շէյխի դէմ երեք զօրաւոր բանակ ունեն շար-
ժուն վիճակում (մօտ 40 հազար մարդ)։

Նորին վսեմութիւն Միհնաւալը մի քանի
օրից յետ գնաւու է Բինաբ մի քանի հազար
նոր զօրքով, որպէս զի այնտեղից Սովուք-Բու-
լաղի վրա գնացող բանակներին անձամբ հրա-
մայէ։

Արմենակ

ՄՇԸԱՍԻ ՀԵՌՈՒԹԻՒՆԵՐ

ՄԻՋԱՂԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 12 նոյեմբերի։ Իրէկ
կոմս Եօրիս-Միլիթար ուղի որովցեալ ի վաղիս,
միջնորդութեան կառավարութիւնը ժամա-
նակաւորապէս Կախանովին յանձնելով, «ԼՈ-
ՏՈՇԵՒ» լրագիրն հաղորդում են, որ քիւրդերը
սպանուում են Թաւրիզին։ Ռուսաց հիւպա-
տոսը Թաւրիզում հրաման ստացաւ թող-
նել իր տեղը և անյապաղ Թիւրքիա ուղեոր-
վել։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՊՐՈՒՆԻ

